# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*«Մեր մկրտությամբ մեկ ենք՝ որտեղ էլ լինենք, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, նույն ազգի, մեր Հայրենիքի զավակներն ենք:*

*Ապրենք – գործենք միության այս զգացումով ու միմյանց հանդեպ սիրով...»*

ԳԱՐԵԳԻՆ Բ

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության հրաշափառ տոնը, որը մեծ շուքով տոնախմբվեց ամենայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Դեռ հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության ու բյուրավոր բարեպաշտ հայորդիների, Միածնաէջ Սուրբ Տաճարում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր տեսուչ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: Պատարագից հետո կատարվեց նախատոնակ, որից հետո տրվեց ավետիսը Տիրոջ Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության, ապա Իջման Սուրբ Մեղանի կանթեղից բարեպաշտ ժողովրդին բաժանվեց Սուրբ Ծննդյան կենարար լույսը:

Հունվարի 6-ին Մայր Տաճարում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ որպես առընթերականեր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական և հրատարակչական բաժինների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանին և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանին:

Միաբաններից կազմված հանդիսավոր հայրապետական թափորը Վեհարանից ամպհովանու ներքո Ամենայն Հայոց Հայրապետին և Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին առաջնորդեց դեպի Մայր Տաճար: Հայրապետական ամպհովանակիրներն էին ՀՀ Կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյանը, Ռազմիկ Դավոյանը, Լևոն Մալխասյանը և «Հորիզոն 95» ՍՊԸ տնօրեն Գագիկ Գալստյանը:

Ս. Պատարագի ընթացքին Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Նորին Սրբությունը ցավով անդրադարձավ այս օրերին Մերձավոր Արևելքում՝ հատկապես Գազայում ընթացող ռազմական գործողություններին և հրավիրեց ամենքին աղոթելու և հայցելու Փրկչին՝ վերահաստատելու խաղաղությունը Մերձավոր Արևելքի երկրներում և համայն աշխարհում՝ զորացնելով եղբայրսիրության ոգին մարդկանց մեջ:

Հրաշափառ տոնի առիթով Հայոց Հայրապետն իր ողջույնները հղեց համայն հայ ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ և ի Սփյուռս, Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռների

Ամենապատիվ Գևորգ Գ Կաթողիկոսը Իր գահակալության ընթերցումը Ս. Էջմիածնի մայր տաճարում

Ս. ՊԱՍԱՐԻՍԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՄԱՍՏԱՐԱՊԵՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՂԵՐԵՑԻՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՆ

ԿԵՍԱՐԻՈՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՋՈՒՐԸ ՕՐՀՆՈՒՄ Է Ս. ՄԱՅՈՎ ԵՎ ԽԱՉԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ Է ՋՐՕՐՀՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿՆՔԱՀԱՅՐ ՍՈՒՐԱՏ Լ.ՊՈՒՏՅԱՆԻՆ

գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին և Հայ Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին: Նորին Սրբությունը Հայրապետական իր օրհնությունն ու ողջույնները ուղղեց նաև Պատարագի սրբազան արարողությանը ներկա ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ինչպես նաև ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին, հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Ս. Պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը կատարեց Ջրօրհնեքի արարողությունը՝ ի հիշատակ Քրիստոսի Սուրբ Մկրտության: Այս տարի Մայր Տաճարում Ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը:

Վերջում տոնի առիթով Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*